**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/2 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 13.02.2026թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գրիգորյան

Անդամներ՝ Հ. Պապյան

Կ. Բրուտյան

Ա. Նալբանդյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Լ. Մելիքյանը

**1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի ուսումնասիրության մասին**

---

(Ա. Գրիգորյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ առողջապահության, ՀՀ ԿԳՄՍ, ՀՀ ՊՆ նախարարություններից, ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամից, Երևանի քաղաքապետարանից ստացվել են պատասխան գրությունները:

1.2 Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

**«Դէկս» ՍՊԸ, «Նոր Գրուպ» ՍՊԸ կոնսորցիում**

- Համանման պայմանագիրը և հիմնավորող փաստաթղթերը հայտով կցված չեն: Անհրաժեշտ է ներկայացնել հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

**«Վեհ Իշխանասար» ՍՊԸ, «ԱՅՊՈՇԻՆ» ՍՊԸ, «ԱՐՄԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կոնսորցիում**

- Հայտով ներկայացված համանման պայմանագրի հավելվածները կցված չեն:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «Դէկս» ՍՊԸ, «Նոր Գրուպ» ՍՊԸ կոնսորցիումին և «Վեհ Իշխանասար» ՍՊԸ, «ԱՅՊՈՇԻՆ» ՍՊԸ, «ԱՐՄԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կոնսորցիումին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 16.02.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումները ներկայացվելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում հայտերը

կգնահատվեն անբավարար և կմերժվեն: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/2 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Գրիգորյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 17.02.2026թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Ա. Գրիգորյան

Անդամներ՝ ---------------------------------------- Հ. Պապյան

---------------------------------------- Կ. Բրուտյան

---------------------------------------- Ա. Նալբանդյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Ա. Մանուչարյան